Սրախոսություններ

Լենինականի թատրոնում Փափազյանը վերջին հյուրախաղերն էր տալիս: Հերթական ներկայացումից հետո մի ծերունի մոտեցավ նրան.

- Վարպետ, ընչի բեմը չես թողնի, արդեն ծեր ես:

- Կինդ ծե՞ր է, - հարցրեց Փափազյանը:

- Այո:

- Ինչո՞ւ կնոջդ չես թողնի:

Ծերունին քթի տակ խնդմնդաց ու հեռացավ:

✷ ✷ ✷

Ավետիք Իսահակյանը հյուր է գնում Պերճ Պռոշյանին: Այնտեղ են լինում Դերենիկ Դեմիրճյանը և Պռոշյանի աղջկա ընկերուհիները, որոնք եկել էին Պոլսից: Հյուրասիրությունից հետո Պռոշյանը մի կողմ է քաշում Իսահակյանին և ասում.

- Այ տղա, էս էրեխեքը իրար վրա աչք ունին: Աղջիկն ուզում է գնալ արտասահման, ո՞վ գիտե, էնտեղ ինչ շուն ու գելի բաժին կդառնա, ափսոս է, խոսիր աղջկա հետ, համոզիր Դերենիկին, նրանց սերը գլուխ բեր:

- Քյաչալը դեղ ունենա, իր գլխին կքսի, - պատասխանում է Իսահակյանը:

✷ ✷ ✷

Հրաչյա Ռուխկյանը գնում է Իսահակյանի մոտ:

- Վարպետ ջան, ինձ պատվիրել են նկարել «Ոգնու» շապիկը՝ նվիրված ձեր ծննդյան ութսունամյակին: Ուզում են ձեր ցանկությունն իմանալ:

Վարպետը ժպտալով ասում է

- էհ, լավ, Հրաչ ջան, «Ոգնուն» էլ արժանացանք, լսե՞լ ես նորությունը... Լենինականում «Ոգնին» չի վաճառվում: Երբ Երևանից հարցրել են պատճառը, էնտեղից պատասխանել են. «Ամեն մի գյումրեցի մի ոգնի է, էլ «Ոգնին» ի՞նչ կենեք»:

- Լսել եմ, վարպետ ջան, - ասում է Ռուխկյանը, բայց էս մի համարը քո պատճառով բացառություն կեղնի, ամբողջ տպաքանակը միայն Գյումրին կառնի:

✷ ✷ ✷

Ռուխկյանի անհատական ցուցահանդես այցելեցին Իսահակյանն ու Սարյանը:

- Վարպետ ջան, - Իսահակյանին դիմեց նկարիչը, - Մարտիրոս Սերգեիչի ներկայությամբ խոստանում եմ հավանածդ նկարները նվիրել:

Վարպետը նայեց նկարչին ու ժպտալով ասաց.

- Լոպազ գյումրեցի, վնասդ մեծ կեղնի, - մոտեցավ, մատնացույց արեց «Զրաղաց Բյուրականում» նկարն ու ավելացրեց, - մեղք ես, էս մեկը հերիք է:

✷ ✷ ✷

Իսահակյանը հյուր էր Ռուխկյանին: Նա հարևանի կտուրին կանգնած, աչքերը կկոծած, զննող հայացքով նայում էր շուրջը: Օջախի վրա եփվում էր խաշլաման, քիչ այն կողմ նկարչի եղբայրը խորոված ի տեղն էր պատրաստում:

- Պարույր ջան, ծանոթացիր, վարպետն է, - նկարիչը դիմեց եղբորը:

- էդ ինչ լավ անուն ունիս,- ասաց վարպետը և ցույց տալով ոչխարի մորթին, որը աղած գցած էր արևին չորանալու, ասաց.

- Ծո, գյումրեցի, ստացածդ ինչ է, որ էդպես ծախս ես տեսել...

- Վարպետ ջան, էս կմնա, - ասաց Ռուխկյանը:

- Չէ, սխալ ես, իսկի հուշ կդառնա, մենակ նկարածդ Սայաթ-Նովան կմնա:

Հրանտ Սարգսյան

Урок № 1
Армянский язык для самых маленьких

Արարատ սարը

Ա ա (A a) - Այբ

Բանաստեղծությունն անգիր արտասանի՛ր:

ՄԵԾ ԵՄ

Արդեն մեծ եմ ես, գիտե՞ք,
էլ ինձ փոքրիկ չկարծեք.
Ոտքիս ծայրին թե կանգնեմ,
Մեծ սեղանին կհասնեմ:

(Ջ. Հ. Գյուլամիրյան, Իմ առաջին ընթերցարանը, Եր., 2003)

✷ ✷ ✷

Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նըստած իր ճըմբին,
Լոռու հանդում մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:

(Հովհ. Թումանյան)

Փորձի՛ր այսպես գեղեցիկ գրել:

ա ա
Ա՛ Ա՛
ա Ա՛

Գիտե՞ս, որ...

Հայոց այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Նա դարձել է հայերենի առաջին ուսուցիչը, նաև՝ հայերեն առաջին այբբենարանի հեղինակը: Հիշի՛ր մեսրոպատառ հայերեն արտահայտությունը:

սունկ **սկյուռ**

Ս ս (Cc) - Սե

Բանաստեղծությունն անգիր արտասանի՛ր:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Սիրում եմ քեզ,
Հայո՛ց լեզու,
Մայրիկիս պես
Անուշ ես դու:
Քեզնով եմ ես
Հպարտանում
Կարդում, գրում,
Արտասանում:

(Ռ. Ղարիբյան)

Փորձի՛ր այսպես գեղեցիկ գրել:

ս ս
Ս՛ Ս՛
սս
Հայ՛ սուս:

Գիտե՞ս, որ...

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է պատմական Հայաստանի Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Հիշի՛ր, որ դարեր շարունակ Տարոն գավառի տերերն են եղել Մամիկոնյան փառապանծ տոհմի նախարարները: Տարոն գավառն Արևմտյան Հայաստանի մի մասն է և ներկայումս գտնվում է Թուրքիայի տարածքում: Հայոց ցեղասպանությունից հետո Տարոն գավառը, ինչպես և ողջ Արևմտյան Հայաստանը, այլևս հայաբնակ չեն: Սիրելի՛ փոքրիկ, իսկ քո՛ ընտանիքի համար դրանք պատմական հայրենիքի՞ մի մասն են, թե՞ թուրքական պետության:



ինքնաթիռ

Ի ի(Ии) - Ինի

Բանաստեղծությունն անգիր արտասանի՛ր:

ԻՄ ՏԻԿՆԻԿԻՆ

Իմ լավ տիկնիկ, իմ կուկու՛,
Այդ ինչու՞ չես քնում դու:
Գիշերը բուն չի ննջում,
Մթնով որսի է թռչում:
Քնի՛ր, քնի՛ր, իմ կուկու՛,
Դու տիկնիկ ես, ոչ թե բու:

(Ջ. Հ. Գյուլամիրյան, Իմ առաջին ընթերցարանը, Եր., 2003)

Փորձի՛ր այսպես գեղեցիկ գրել:

ի ի
Ի՛ Ի՛
ինի ինի
Ինա՛ սուս:

Գիտե՞ս, որ...

Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը հինգերորդ դարում գրի է առել նրա աշակերտներից մեկը՝ Կորյունը: Գիրքը կոչվում է «Վարք Մաշտոցի»:

ձի

խոյ

Խ խ (Xx) - Խե

Բանաստեղծությունն անգիր արտասանի՛ր:

ԱՄԱՌ

Խաղաղ դաշտերին
Իջել է ամառ,
Բերել է երկրին
Բարիք անհամար:
Քամին մեղմօրոր
Համբույր է տալիս,
Հասկերը շորոր
Գնում են, գալիս....

(Ռ. Ղարիբյան)

Փորձի՛ր այսպես գեղեցիկ գրել:

խ խ
Խ՛ Խ՛
խխ խխ
կարմիր մեխակ
սիրուն սոխակ
վարդագույն նապաստակ
անվախ որսկան

Գիտե՞ս, որ...

Հայոց այբուբենն այժմ բաղկացած է երեսունհինգ տառերից, սակայն միշտ չէ, որ ադպես է եղել: Մինչև միջնադար դրանք միայն երեսունվեցն էին՝ ա-ից մինչև ք-ը, օ-ն և ֆ-ն ավելացել են միջին դարերում, ուստի և ասում ենք .... ց ու փ ք և օ ֆ: Այժմ հայերենի այբուբենն ունի երեսունութ տառ, իսկ ասել ....ց ու փ ք և օ ֆ նույնն է, թե ասենք՝ Աշոտ, Վահագն, Արտաշես և Նարեկ:

Պատրաստեց՝ Արմինե Վարդանյանը

Զորի Բալայան - 75

ՄԱՐԴՈՒ ԱՆՈՒՆԸ ՆՐԱ ԿԵՐՊԱՐՆ Է

Զորի Բալայան, Վիկտոր Կրիվոպուսկով. Սերժ Սարգսյան 10.01. 2008 թ.

Զորի Բալայանն ասպետ է բառիս իսկական իմաստով: Նա ապրում է բարձր, ռոմանտիկ լույսի մեջ: Խիզախություն և բարոյականություն, արիություն և քնքշանք: Զինվոր, մարտիկ, աներկյուղ գլադիատոր՝ հայության քաղաքական ասպարեզում:

Նա տարիք չունի, որովհետ գալիս է դարերի խորքից, Մամիկոնյանների ժամանակներից, գուցեև ավելի հեռվից՝ Հայկի ժամանակներից: Նրանք հայերի հավերժական ուղեկիցներն են, ազգն է նրանց ծնում:

Ասպետները հաճախ անըմբռնելի են, հաճախ՝ մենավոր:

Զորիկն այդպիսին է իմ պատկերացումների մեջ: Մենք մտերմացանք Ղարաբաղյան շարժման նոր ալիքի վրա: Դժվարությամբ ճանաչեցի նրան: Հեշտ չէ նրա էությունն ըմբռնելը: Նա այնքան էլ բացսիրտ չէ: Որպես իսկական տղամարդ՝ չի սիրում անկեղծանալ, այնքան էլ պարզ չէ, ինչպես թվում է հաճախ:

Իմաստնությունը հեռու է ցուցամոլությունից: Պայքարը նրա գոյության միջոցն է: Արցախը՝ նրա մոտակա նպատակը: Պայքար հանուն արդարության, հանուն ճշմարտության, ա՛յն ճշմարտության, որ անհամատեղելի է դիվանագիտական խորամանկությունների հետ, հեռու է մանր խարդավանքներից:

Գեղեցկությունը չի կարող փրկել աշխարհը, մարդկությունն արդեն բավականաչափ տեսել է դրանից:

Աշխարհը կարող է փրկել դաժան ճշմարտությունը: Նա համոզված է դրանում:

Զորին հավատում է մարդկանց, բայց ավելի շատ վստահում է գործին: Կլուծվի՞ Ղարաբաղյան հարցը՝ նույնպես կրքով նա կնախաձեռնի Նախիջևանի հարցը, որովհետև դա նպատակի շարունակությունն է, արդարության ոտնահարման ևս մեկ օղակ:

Նա իր մեջ կրում է հայության երազանքը, իսկ այդ երազանքի սահմանն ընդարձակ է:

Նրա ուժը թշնամու հանդեպ ատելության մեջ չէ, նման զգացումը ժանտախտի պես ավերիչ է ու կործանարար: Նրա ուժը հայրենիքի սիրո մեջ է, ուստիև՝ այլոց հանդեպ հարգանքի մեջ: Այ թե որտեղ է նա անխոնջ:

Նրա եռանդը բազմիցս ապշեցրել է ինձ: Նա գործունյա է, ինչպես ժողովրդի ոգին, ինչպես ոգու աշխատանքից ծնվող ժողովրդի իմաստնությունը:

Նա իսկապես իր մեջ ներծծել է ժողովրդական ամենայն բան: Նա հայրենասեր է առանց շաղակրատանքի, վարող եզ:

Նա խստապահանջ է իր և գթասիրտ՝ այլոց հանդեպ՝ որպես իսկական քրիստոնյա: Նա մեր հիշողության պահապանն է: Քանի դեռ կան այդպիսիք, մեր հիշողությունը չ'ի քնի, չ'ի մեռնի: Նրա միտքը և՝ ժամանակակից է, և՝ ավանդական:

Նա մեր պատմության արքուն զինվորն է, որ պատասխան է պահանջում չլուծված բոլոր հարցերի համար:

Զորիկը պարզ է, բայց նրա համառությունը ուժասպառ կարող է անել հակառակորդին: Կաթիլը քար է ծակում ...

Սոս Սարգսյան

«... Զորի Բալայանը Ղարաբաղյան շարժման նախաձեռնողներից մեկն է, նրանից ուղղակի Ղարաբաղի շունչ է փչում և հայրենիքի սեր»:

Ա. Դ. Սախարով

«... Բալայանը ազգայնամոլ անձնավորություն է, ըստ որում՝ թունդ ազգայնամոլ, երդվյա՛լ, մենավոր գայլ: Տաղանդավոր է, շատ արագ է կողմնորոշվում»:

Մ. Ս. Գորբաչով

«... Ուզում եմ համբուրել Զորիի ճակատն այն բանի համար, որ սովորեցնում է մեզ, թե ինչպես պետք է սիրել հայրենիքը»:

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա